ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

2010 թվականի ապրիլի 15 - ին Կոտայքի մարզպետ Կ. Շահգալդյանը մարզպետարանի ներկայացուցիչների հետ այցելեց Բյուրեղավան համայնք: Հանդիպում ունեցավ «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ - ի, «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ – ի, Բյուրեղավանի Ս. Վարդանյանի անվան N1 միջնակարգ դպրոցի, «Բյուրեղավանի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ – ի, Բյուրեղավանի N 2 միջնակարգ դպրոցի աշխատակիցների, քաղաքապետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության կառույցների ղեկավարների, ինչպես նաև Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու անդամների հետ: Այնուհետև հանդիպում ունեցավ համայնքի բնակչության հետ, որի ընթացքում քաղաքապետ Հ. Բալասյանը հաշվետվություն ներկայացրեց 2009 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2010 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում Բյուրեղավանի քաղաքային համայնքում իրականացված աշխատանքների մասին՝

- Համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է բնակիչների ընդունելություն, ընդունելությանը մասնակցել է 110 մարդ, որոնց հուզող հարցերին տրվել է պարզաբանում և օրենքի սահմաններում՝ դրական լուծում են ստացել:
- 219 քաղաքացիներ դիմել են տարբեր սոցիալ - տնտեսական խնդիրներով և ժամանակին ստացել լուծում, որից 52 - ին ցույց է տրվել ֆինանսական օգնություն:
- Կատարվել է ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1855 - Ն որոշման պահանջները՝ Բյուրեղավան քաղաքի բազմաբնակարան շենքերի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը անհատույց փոխանցվել են բազմաբնակարան շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով:
- Գազիֆիկացվել է և գազի վառարաններով տաքացվել է «Բյուրեղավանի արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ - ի շենքը, որի արժեքը կազմել է 900,0 հազար դրամ:
- Հիմնանորոգվել է Բյուրեղավան քաղաքի մշակույթի տան տանիքը, որի արժեքը կազմել է 11968,3 հազար դրամ:

- Իրականացվել է քաղաքի փողոցների լուսավորությունը, որի արժեքը կազմել է 9960,8 հազար դրամ:
- Կազմակերպվել է աշնանային և գարնանային ծառատունկ, որի ընթացքում տնկվել է 450 ծառ:
- Իրականացվել են քաղաքային հուշահամալիրի տարածքի բարեկարգման աշխատանքներ:
- Իրականացվել է տանիքների վերանորոգում՝

- թեք տանիքներ - 404 մ^2

- հարթ տանիքներ - 150մ^2

- ջրագծերի և կոյուղագծերի վերանորոգում - 81 գծ/մ
- Իրականացվել է Բյուրեղավանի 1-ին թաղամասի 12 շենքերի մուտքերի դռների պատրաստում և տեղադրում :
- Բարձրացել է աղբահանության կազմակերպման մակարդակը:
- «Բյուրեղավանի արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատության աշակերտները մասնակցել են մարզային, հանրապետական և միջազգային մրցաշարերի և գրավել մրցանակային տեղեր:
- Նախատեսվում է համաֆինանսավորմամբ իրականացնել «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ - ի շենքի ջեռուցումը և հին պատուհանների, պատուհանագոգերի փոխարինումը նորով, որտեղ համայնքի ներդրումը կկազմի 10477,9 հազար դրամ:

Հ. Բալասյանը մասնակիցներին ներկայացրեց նաև Բյուրեղավանի քաղաքային համայնքի 2009 թվականի բյուջեի կատարողականի և 2010 թվականի 1-ին եռամսյակի կտրվածքով բյուջեի հաշվետվությունները՝ համաձայն հավելվածների:

Հանդիպման ժամանակ հանրությանը իրազեկվեց 2010 թվականի մարտ ամսին Կոտայքի մարզպետարանի կողմից Բյուրեղավանի քաղաքային համայնքում իրականացված վարչական և ֆինանսական հսկողության արդյունքում կազմված ակտի մասին: Ներկայացվեցին տեղական ինքնակառավարման, ֆինանսական, հողաշինության, հողօգտագործման և քաղաքաշինության բնագավառներում առկա թերությունները:

Հանձնարարվեց՝

- Վերացնել և շտկել Բյուրեղավանի քաղաքային համայնքում և նրա ենթակա կազմակերպություններում առկա թերությունները և խախտումները:
- Մարզպետարան տեղեկատվություն ներկայացնել կատարված աշխատանքների մասին:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

nn	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Տարեկան 2009թ.		կատարող. տոկոսը	շեղում + / -
		պլան	փաստ		
	Ընդամենը եկամուտներ	136241.3	148176.3	108.8	+11935.0
1	Հարկային եկամուտներ	19926.3	25619.9	128.6	+5693.3
1.1	Հողի հարկ	5224.0	6197.4	118.6	+973.4
1.2	Գույքահարկ	14702.3	19422.2	132.1	+4719.9
2	Տեղական տուրքեր	1810.0	1915.3	105.8	+105.3
3	Այլ եկամուտներ	1883.0	1698.1	90.2	-184.9
4	Դոտացիա	75387.0	75387.0	100.0	-
5.	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	29530.0	35671.6	121.5	+6321.3
6.	Տարեսկզ. ազատ մնաց.	7884.7	7884.7	100.0	-
	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ				
	Ընդամենը ծախսեր	149120.8	128577.1	86.2	-20543.7
	Ընդամենը ընթացիկ ծախսեր	99006.3	80505.9	81.3	-18500.4
1	Տեղակ. ինքնակառավ.	26468.0	21513.1	81.3	-4954.9
2	Ընդ.համ. այլ բնույթ. ծառ.	675.0	485.2	71.9	-189.8
3	Արվեստի դպրոց	18865.0	18770.6	99.5	-94.4
4	Նախադպր. կրթություն	1250.0	1249.1	99.9	-0.9
5	Սոցիալ. ապահովագ.	2441.6	2439.1	99.9	-2.5
6	Մշակույթ	6966.0	6590.2	94.6	-375.8
7	Շրջակա միջավայրի պաշտպանություն	23900.0	23897.4	100.0	-2.6
8	Բնակար. շինար. և կոմունալ ծառայություն	4336.2	4336.2	100.0	-
9	Պահուստային ֆոնդ	-	-	-	-
10	Ֆոնդային բյուջե	50114.5	48071.8	95.9	-2042.7
10.1	Շենքերի և շինություններ	35364.5	33332.9	94.3	-2031.6
10.2	Մեքենաներ և սարքավորումներ	14460.0	14448.9	99.9	-11.1
10.3	Այլ հիմնական միջոցներ	290.0	290.0	100.0	-

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

nn	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	առաջին եռամսյակ 2010թ.		կատարող. տոկոսը	շեղում + / -
		պլան	փաստ		
	Ընդամենը եկամուտներ	49458.6	47731.5	96.5	-1727.1
1	Հարկային եկամուտներ	2739.1	3114.4	113.7	+375.3
1.1	Հողի հարկ	817.6	816.7	99.9	-0.9
1.2	Գույքահարկ	1921.5	2297.7	119.6	+376.2
2	Տեղական տուրքեր	551.0	634.6	115.2	+83.6
3	Այլ եկամուտներ	415.0	654.4	157.7	+239.4
4	Դոտացիա	23154.9	23154.9	100.0	-
5.	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	3000.0	574.6	19.2	-2425.4
6.	Տարեսկզ. ազատ մնաց.	19598.6	19598.6	100.0	-
	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ				
	Ընթացիկ ծախսեր	22360.0	17918.7	80.1	-4441.3
1	Տեղակ. ինքնակառավ.	7372.0	5070.1	68.8	-2301.9
2	Ընդ.համ. այլ բնույթ. ծառ.	713.0	41.4	5.8	-671.6
3	Արվեստի դպրոց	4888.0	4495.2	92.0	-392.8
4	Նախադպր. կրթություն	-	-	-	-
5	Սոցիալ. ապահովագ.	500.0	475.0	95.0	-25.0
6	Մշակույթ	1770.0	1474.1	83.3	-295.9
7	Շրջակա միջավայրի պաշտպանություն	6632.0	6362.9	95.9	-269.1
8	Բնակար. շինար. և կոմունալ ծառայություն	85.0	-	-	-85.0
9	Պահուստային ֆոնդ	400.0			-400.0
10	Ֆոնդային բյուջե	27098.6	11968.3	44.2	-15130.3
10.1	Շենքերի և շինություններ	27098.6	11968.3	44.2	-15130.3
10.3	Այլ հիմնական միջոցներ		-		-
	Ընդամենը ծախսեր	49458.6	29887.0	60.4	-19571.6